ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ,
НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА

ГЕНЕРАЛЬНЫЙ СЕКРЕТАРЬ

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION,
SCIENCE, CULTURE AND SPORT

GENERAL SECRETARY

0010, Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.: 59- 96-08 , ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43
0010, Ереван, В. Саргсян 3, Дом правительства 2, 0010, V. Sargsyan 3, Government House 2, Yerevan, secretariat@escs.am,www.escs.am

N---------- ---------- ----------2020թ.

Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ-ի
նախագահ Շուշան Դոյդոյանին
Էլ. փոստ՝ manemadoyan@gmail.com
foi@foi.am

Հարգելի՛ տիկին Դոյդոյան,

Ի պատասխան 2020 թվականի հուլիսի 25-ի ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանն ուղղված Ձեր՝ գիտության, մշակույթի, սպորտի բնագավառներում ՊՈԱԿ-ներից և ՀՈԱԿ-ներից բացի այլ իրավական կազմակերպական ձևով գործող, ոչ առևտրային ընկերությունների մասին հարցման՝ հայտնում ենք հետևյալը.

«Կրթության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «ոչ պետական ուսումնական հաստատությունները կարող են ունենալ օրենքով նախատեսված ցանկացած կազմակերպական-իրավական ձև»: Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի բնագավառներում բացի ՊՈԱԿ-ներից և ՀՈԱԿ-ներից, գործում են նաև փակ բաժնետիրական ընկերություններ, կրթահամալիրներ և հիմնադրամներ:

Նախարարության համակարգում գործող սպորտային կազմակերպություններն են «Դավիթ Համբարձումյանի անվան ջրացատկի օլիմպիական հերթափոխի մասնագիտացված մարզադպրոց» ՓԲԸ-ն և «Մարզաձևերի զարգացման հանրապետական համալիր կենտրոն» ՓԲԸ-ն: Կրթության ոլորտում գործում է «Գեղագիտության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն: Հանրակրթության ոլորտում գործում են «Երևանի Գևորգ Էմինի անվան թիվ 182 ավագ դպրոց» հիմնադրամը, «Հայ-չինական բարեկամության դպրոց» հիմնադրամը և «Ծաղկունք բաց դպրոց» հիմնադրամը:

Նախնական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հիմնադրամները, կրթահամալիրները և ՓԲԸ-ներն են՝ «Հայաստանի Եվրոպական քոլեջ» հիմնադրամը, «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ՓԲԸ-ն, Մխիթար Սեբաստացի կրթահամալիրը, «Հայաստանի ֆրանսիական քոլեջ» հիմնադրամը, «Ֆրանս-հայկական ուսումնական կենտրոն» հիմնադրամը, «Երևանի հենակետային բժշկական քոլեջ» ՓԲԸ-ն, «Երևանի իրավատնտեսագիտական և կառավարման քոլեջ» հիմնադրամը, Հանրապետական թիվ 2 հատուկ կրթահամալիրը, Աբովյանի կրթահամալիրը, Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիրը:

Հարգանքով՝ ՎԱՀՐԱՄ ԳԱՍՊԱՐՅԱՆ

/պարտականությունները կատարող/

31.07.2020

X

ՎԱՀՐԱՄ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Կատարողներ՝ Հասարակայնության հետ կապերի
և տեղեկատվության վարչություն,
Գայանե Աբասյան, հեռախոս՝ (010) 599-669, (098) 869-771

Իրավաբանական վարչություն
Հեռախոս՝ (10) 599-660,